



ՄՈԳԱԿԱՆ ՔԱՌԱԿՈՒՄ

Մոգական քառակուսի անվանում են այն աղյուսակը, որում 1, 2, 3, ... թվերը գրված են մեկ անգամ և բոլոր տողերում ու սյուներում գտնվող թվերի գումարները հավասար են իրար: Ներկայացնենք մոգական քառակուսու կառուցման Սիամյան եղանակը: Այն կիրառելի միայն կենտ կողմ ունեցող քառակուսիների համար (3x3, 5x5, ...):

Գրենք 1 թիվը մեջտեղի սյան ամենավերին վանդակում, հետո կսկսենք շարժվել անկյունագծով աջ-վերև՝ հերթականությամբ վանդակների մեջ տեղադրելով 2, 3, 4, ... թվերը: Եթե դուրս գանք աղյուսակի սահմաններից դեպի վեր, ապա պետք է շարունակենք հենց այդ սյան ամենաներքևի վանդակից: Եթե դուրս ենք եկել աջ սահմանից, ապա պետք է սկսել այն սյան ամենաձախ վանդակից, որին մենք պետք է հասնեինք: Եթե մենք միաժամանակ բարձրացել ենք և՛ վերև և՛ աջ, ապա պետք է անցնել քառակուսու ներքևի ձախ վանդակը: Եթե մեր ճանապարհին հաջորդ վանդակում արդեն թիվ կա, ապա աջ-վերև քայլի փոխարեն պետք է կատարենք քայլ ներքև (եթե մենք դուրս գանք քառակուսու սահմաններից, պետք է շարունակենք գրել այդ սյան վերևի վանդակից): Նկարներում բերված են 3x3 և 5x5 մոգական քառակուսիների կառուցման օրինակները:



Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է N բնական կենտ թիվը, որը չի գերազանցում 30-ը:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել քառակուսում գրված թվերը: Սյուներով թվերը հավասարեցնելը պարտադիր չէ: Պետք է հաշվի առնել, որ պահանջվում է արտածել այն մոգական քառակուսին, որը ստացվել է տրված եղանակով:

Օրինակներ`

N	stdin	stdout
---	-------	--------

1	5	17 24 1 8 15 23 5 7 14 16 4 6 13 20 22 10 12 19 21 3 11 18 25 2 9
2	1	1

Պատրաստեց՝ Թամարա Հովհաննիսյանը: